ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հուլիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

96
(2762)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ԹՈՐՈՍՅԱՆԸ «ՓՈՐՈՒՄ Է» ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՈՏՔԻ ՏԱԿԸ



«Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը շարունակում է տեղեկություններ ստանալ Առողջապահության նախարարությունից, որը նա գլխավորել է 2018 թվականից մինչեւ 2021թ.-ը: Առողջապահության նախկին նախարարի նպատակը գործող նախարարին՝ Անահիտ Ավանեսյանին գահընկեց անելն է: Մեր տեղեկություններով՝ Արսեն Թորոսյանը զղջացել է, որ դուրս է եկել գործադիր մարմնից: Նրան մոտ կանգնած մարդիկ կարծում են, որ Թորոսյանին հանգիստ չի տալիս իր նախկին ենթակա Անահիտ Ավանեսյանի պահվածը, որը երես է թեքել նրանից ու դարձել Նիկոլ Փաշինյանի վստահելի կադրերից մեկը: Ըստ ուժային համակարգի մեր աղբյուրների՝ ֆիքսվել են Առողջապահության նախարարության բարձրաստիճան աշխատակիցների կողմից վերջինիս հետ սերտ կապեր պահելու եւ տեղեկություններ փոխանցելու դեպքեր: Ըստ շրջանառվող խոսակցությունների՝ Թորոսյանի նպատակն է հասնել Անահիտ Ավանեսյանի հրաժարականին եւ, որպես պլան մինիմում, այդ պաշտոնում նշանակել փոխնախարար Լենա Նանուշյանին: Վերջինս էլ, մեր տեղեկություններով, չնայած արտաքնապես ցույց է տալիս, թե կապ չի պահում նախկին ղեկավարի հետ, իրականում գաղտնի օգնում է վերջինիս ու հավատում, որ նախարարի հեռանալու դեպքում ինքը կարող է զբաղեցնել վերջինիս տեղը: Մեզ փոխանցեցին նաեւ, որ նախարարության վրա վերահսկողություն հաստատելու՝ Թորոսյանի նպատակը, թերեւս, նաեւ այն է, որ այնտեղով անցնում են բավական խոշոր դրամաշնորհային միջոցներ, որոնք վերահսկելը, մեղմ ասած, շատ շահեկան է: Ավելին՝ Թորոսյանը շարունակում է վախենալ, որ 2020թ.-ին «Քովիդ 19»-ի միլիոնների ծախսերի մասով հարուցված քրեական գործի տակից դուրս գալու համար անհրաժեշտ է հետ գնալ նախարարություն ու վերահսկել ուժայիններին փոխանցվող փաստաթղթերը, մասնագիտական եզրակացությունները եւ այլն: Կիաջողվի արդյոք Թորոսյանին գահընկեց անել Ավանեսյանին՝ ցույց կտա ժամանակը: Փորձեցինք այս ամենի շուրջ մեկնաբանություն վերցնել նաեւ Արսեն Թորոսյանից, սակայն մեր բազմաթիվ զանգերն այդպես էլ անպատասխան մնացին:



Հայրենի օրենսդիրը հաջորդ շաբաթ կվերսկսի իր աշխատանքը, ԱԺ արտահերթ նիստեր են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հուլիսի 10-ին խորհրդարանն արտահերթ նստաշրջան կիրավիրի: Թե ինչ հարցեր են լինելու օրակարգում, ադ մասին ՔՊ-ականները մեզ ասացին, որ դեռ հստակեցված չէ. նախորդ նստաշրջանից օրենքի նախագծեր են մնացել, որոնք չեն հասցրել քննարկել, դրանք կքննարկեն հաջորդ շաբաթ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը չի վարելու նիստը, նա գործուղման է լինելու այդ ընթացքում. ԱԺ նախագահի փոխարեն՝նիստերը կվարի փոխնախագահ Հակոբ Արշակյանը: Թերեւս սա կլինի այս ամռան վերջին արտահերթ նստաշրջանը, եթե, իհարկե, հրատապ հարցեր չառաջանան: ՔՊ-ականները կփորձեն ավարտին հասցնել օրենքի նախագծերի քննարկումները, քանի որ առջեւում թեժ ամառ է սպասվում, իշխանականներն արդեն ողջ ռեսուրսով կանցնեն ավագանու ընտրությունների քարոզարշավի գործին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանը ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործով վկաներից մեկին բերման կենթարկի: Մեզ հայտնի դարձավ, որ վկան ոստիկանության նախկին աշխատակից Վահան Սարգսյանն է: Հիշեցնենք, որ գործով կա 4 մեղադրյալ՝ Վլադիմիր Գասպարյանը, Լեւոն Երանոսյանը, Վարդան Թունյանը, Գուրգեն Գրիգորյանը: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը՝չհեռանալու մասին: Վլադիմիր Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել՝ՔՕ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (Յուրացնելը կամ վատնելը՝ առանձնապես խոշոր չափերով (2 դրվագ)) եւ 308-րդ հոդվածի 2-րդ մասով (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ (2 դրվագ)): Լեւոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել՝ՔՕ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 314-րդ հոդվածի 1-ին մասով (Պաշտոնեական կեղծիք) եւ 308-րդ հոդվածի 2-րդ մասով: Վարդան Թունյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով: Գուրգեն Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով:



«Ժողովուրդ» օրաթերթին Հակակոռուպցիոն կոմիտեից պաշտոնապես հայտնեցին, որ Կորոնավիրուսի համավարակի հետ կապված չարաշահումների գործով 25 բժիշկ մեղադրյալի կարգավիճակ ունի: Մի շարք մութ պատմություններով ու խորհրդավոր բուժման պայմաններում ընթացած պայքարը Կորոնավարակի դեմ դեռ շարունակում է քննվել ու քննվել: Ավելի վաղ Հակակոռուպցիոն կոմիտեն հաղորդագրություն էր տարածել այն մասին, որ 2020-2022 թթ.ին առողջապահության փոխնախարարի պաշտոնը զբաղեցրած Գեւորգ Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քավոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրենի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւանքով Բաբկեն Շահումյանը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ: Այս քրեական վարույթով մի շարք ձերբակալություններ ու կալանավորումներ սկսեցին, ու ձերբակալվածների մեծ մասը «Մեդլայն» բժշկական կենտրոնի բժիշկներ էին:

ԶՐՈՒՅՑ

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՆՍ

**«Ադրբեջանը պատրաստվում է Ղարաբաղում իրականացնել «Վրեժ-3» գործողությունը». այդ մասին ասվում է ադրբեջանական պետական Az Tv հեռուստաընկերության թողարկման ժամանակ: Ֆեյսբուքյան իր էջում թեմային անդրադարձել է նաեւ ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը:**



Ադրբեջանական պետական հեռուստաընկերության կողմից ցուցադրված թողարկման ժամանակ մեջբերումներ են արվել նաեւ Ալիեւի ռազմատենչ ելույթներից՝ թե, իբրեւ, խաղաղապահները զինում են Արցախին, թե Ադրբեջանը դեռ չի հասել «Զանգեզուրի միջանցքի» բացմանը, ու պետք է քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

Ադրբեջանի նախագահը մեղադրել է Հայաստանին եւ Ռուսաստանին իբրեւ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը խախտելու համար:

Ըստ Տաթեւիկ Հայրապետյանի՝ սա Ադրբեջանի ղեկավարության կողմից հնարավոր հարձակման գնալու ակնհայտ անոնս է, ինչը պետք է արագ ներկայացնել միջազգային գործընկերներին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը նույնպես չի բացառում, որ Ադրեջանի նախագահն անոնսում է ռազմական գործողությունների մասին:

-Սա նորություն չէ, այսինքն՝ այս հայտարարություններով չէ, որ պետք է հետեւություններ ու եզրակացություններ անենք: Նույնիսկ այդ անվան՝ վրեժի կիրառումը ամեն բան ասում է: Այսինքն՝ երբ մենք ասում ենք՝ վրեժ, դա ու՞մ դեմ ենք կիրառում, թշնամու, չէ՞: Այդ մարդիկ այսօր բացահայտ ասում են, որ մենք իրենց թշնամիներն ենք: Առաջին հերթին մենք ինքներս պետք է հետեւություններ անենք, իսկ այդ հետեւություններն անելու համար չպետք է իրականությունից կտրվենք: Խնդիրը ժողովրդի մեջ չէ: Չի լինում լավ կամ վատ ժողովուրդ, լինում է լավ ու վատ պետություն, վտանգավոր ու ոչ վտանգավոր համակարգեր: Այժմ նա բացեիբաց հայտարարում է, որ մեզ ուզում է հոշոտել, եւ երբ ասում ենք, որ Արցախի կորստով կկտրվի Հայաստանի գլուխը, շատերը մտածում են, որ սրանք պարզապես խոսքեր են, սակայն դա այդպես չէ: Հետո անհնարին է լինելու գործընթացը կանգնեցնել, եթե այդպիսի բան եղավ: Դրա համար պետք է այս ամենը երբեք չմոռանանք:

**-Պարո՛ն Բաբայան, չնայած ադրբեջանական կողմից հնչող ամենօրյա այս սպառնալիքներին՝ Հայաստանի իշխանությունները խոսում են խաղաղության օրակարգից: Այս իրավիճակում խաղաղության գնալը կամ խաղաղության օրակարգը ինչքանո՞վ է համարվում պատեհ:**

-Խաղաղությունը, իհարկե, գերագույն արժեք է, բոլորն էլ ուզում են խաղաղություն: Պարզապես խաղաղությունը ոչ թե ցանկություն է, այն էլ՝ մեկ կողմի ցանկությամբ, այլ հավասարակշռության ածանցյալ: Եթե միայն ցանկության վրա հիմնված լիներ, այն էլ՝ մեկ կողմի, հակառակ կողմը չի ուզում, նույնիսկ հավասարակշռություն է խախտել իր օգտին, խաղաղություն չի լինում այդ դեպքում: Եթե մենք մտնենք խաղաղության այդ դարաշրջան, մենք պետք է ունենանք հզոր ռազմական հավասարակշռվածություն՝ լինի դա ռազմական, դիվանագիտական, քաղաքական, թե մեկ այլ ոլորտում: Եթե դա չլինի, չի լինի նաեւ խաղաղություն:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԱՐՁԱԳԱՆՔ

# ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱՔՎԻ ԹԵԶԵՐՈՒՄ

**«Լուրջ հակասություններ կան Բաքվի թեզերում»,- հուլիսի 3-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ընդդիմադիր պատգամավոր Թագուհի Թովմասյանը:**





Նրա խոսքով՝ բոլոր միջազգային հարթակներում ադրբեջանական կողմը՝ ի դեմս իր նախագահի, խոսում է այն մասին, որ Լեռնային Ղարաբաղ չկա, հետեւաբար չկա նաեւ ղարաբաղյան խնդիր: «Այսինքն՝ դրանից բխում է, որ ոչինչ պետք չէ որոշել: Հիմա նրանք մի կողմից հայտարարում են, որ ղարաբաղյան խնդիր չկա, մյուս կողմից՝ որ այն պետք է լուծել «վրեժ 2» հատուկ գործողության միջոցով: Ստացվում է, որ Ադրբեջանի իշխանությունները լուրջ հակասություններ ունեն նախկինում հնչեցրած հայտարարություններում եւ թեզերում»,-ասաց նա:

Միաժամանակ նա չբացառեց Բաքվի կողմից հարցի ուժային լուծման հնարավորությունը: «Միանգամայն հնարավոր է, որ մոտ ժամանակներս ինչ-որ բան պայթի. նրանց բոլոր սադրանքները ցույց են տալիս դա: Եվ այդ սադրանքների նպատակը մեկն է՝ ուժի միջոցով ղարաբաղյան հարցի հերթական լուծումը: Այո, նրանք հաղթանակ տարան վերջին պատերազմում, սակայն Ադրբեջանն այդպես էլ չհասավ իր բաղձալի նպատակին. չէ՞ որ նրանք, ըստ էության, այդպես էլ չլուծեցին այդ հարցը»,- նշեց պատգամավորը:

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒ ԿՆՈՋ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՊԵԿ նախկին նախագահ Էդվարդ Հովհաննիսյանը, որը 2021 թվականի նոյեմբերից Արմավիրի մարզպետն է, 2022 թվականի հայտարարատու տարում հայտարարագրել է 2 բնակարան, որից մեկը՝ Կենտրոն վարչական շրջանում, որը գնվել է 2016 թվականին, իսկ մյուս բնակարանը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ գնված 2021 թվականին: Նա հայտարարագրել է նաեւ 2014 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի մեքենա, որը տարվա ընթացքում օտարվել է 10 մլն դրամով: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 965 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 4 մլն 150 հազար դրամ: Մարզպետի տարեկան եկամուտները կազմել են 32 մլն 079 հազար դրամ, որից 12 մլն 023 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Արմավիրի մարզպետարանի աշխատակազմից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 23 մլն 468 հազար դրամ:

Հովհաննիսյանի հանգստի համար կատարած ճանապարհածախսը եւ կեցության ծախսը կազմել է 2 մլն 950 հազար դրամ, իսկ ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճար կազմել է 2 մլն 200 հազար: Անշարժ գույքի վերանորոգման համար Հովհաննիսյանը ծախսել է 2 մլն 800 հազար դրամ:

Մարզպետը հայտարարագրել է, որ այժմ մեքենա չունի, սակայն Հովհաննիսյանի կինը՝ Մադլենա Հայրապետյանը, հայտարարագրել է մեկ մեքենա՝ TOYOTA մակնիշի 2021 թվականի արտադրության, որը ձեռք է բերվել 15 մլն դրամով: Հայտարարագրել է 3 հազար դոլար եւ 2500 եվրո կանխիկ գումար: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 423 հազար 910 դրամ, որը նվիրատվություն կամ օգնության կարգով ստացված դրամական միջոց է կամ գույք, որը ստացել է Ժաննա Մուրիկի Հայրապետյանից, որը նրա քույրն է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

Կառավարությանն առընթեր Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի համար 2022 թվականի ձեռքբերումների տարի է եղել: Մասնավորապես, նա այդ տարի անհատական բնակելի տուն եւ հասարակական նշանակության շինություն է նվիրատվություն ստացել: Ումից, ինչի դիմաց՝ պարզ չէ պաշտոնական փաստաթղթերից: Կոռուպցիայի դեմ պայքարող Փաշինյանի թիմակիցները շարունակ նվերներ են ստանում, ու դա Փաշինյանը կոռուպցիա չի համարում:

Տեղեկացանք, որ տարվա ընթացքում Խաչատրյանը նաեւ վաճառել է մեկ հողամաս, իսկ տարվա վերջում ունեցել է հինգ հողամաս: 2022 թվականին տեսչական մարմնի ղեկավարը նաեւ 2 մլն դրամով 2017 թվականի արտադրության «Մազդա» է գնել, նաեւ 15 մլն դրամով վաճառել իր մեքենան: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ տարվա ընթացքում նա 61 մլն դրամ եկամուտ է ունեցել, որը գոյացել է աշխատավարձից, ստացված փոխառություններից, գույքի օտարումից: Տարվա վերջում նրա կանխիկ դրամը 9 մլն է եղել:

## ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ



«Ազգային - ժողովրդավարական բեւեռ»-ի մամուլի ծառայությունը երեկ տեղեկացրել էր, որ Վարուժան Ավետիսյանի որդուն՝ Դավիթին, ձերբակալել են եւ Կենտրոնի ոստիկանական բաժանմունքից տեղափոխել ՁՊՎ (ձերբակալվածների պահման վայր):

Ավելի վաղ փաստաբան Արայիկ Պապիկյանը հայտարարեց որ կեսօրին Դավիթ Ավետիսյանը, «Անգլիական» այգու մոտ պատահաբար հանդիպելով Նիկոլ Փաշինյանին, վերջինիս ասել էր, որ պատասխան է տալու մեր նահատակված հերոսների համար, որից հետո նրան բերման էին ենթարկել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանի հետ՝ հարցնելու, թե որքանով է այս գործընթացը իրավական: Վերջինս նշեց, որ գործից տեղյակ չէ, սակայն այսպիսի դեպքերը շատ են. առաջին դեպքը չէ:

«Անկախ այն բանից թե ում որդին է կամ ում բարեկամն է, սա մեզ համար նորություն չէ:

Նիկոլ Փաշինյանը եւ նրա ընտանիքի անդամները այնպիսի մեծ չարիքներ են գործել, որ նրանք պետք է պատրաստ լինեն, որ քաղաքացիները իրենց հարցեր ունեն տալու: Սակայն մենք բազմիցս տեսել ենք, որ ընդամենը «դավաճան» գոռալու համար մարդկանց ձեռբակալել են բացարձակ անհիմն: Եվ անգամ այս պահին, փաստերին չտիրապետելով, կարելի է ասել, որ սա նույն շարքի շարունակությունն է:

Ես ծանոթ եմ նմանատիպ բազմաթիվ դեպքերի, երբ քաղաքացիներին անհիմն պատճառաբանություններով բերման են ենթարկում, օրինակ՝սառը զենք պահելու կասկածանքով եւ այլն, տանում, մի քանի ժամ պահում ու բաց են թողնում: Այնպես որ, Ձեր մեջբերած դեպքը ամենեւին էլ զարմանալու չէ եւ իրենից ներկայացնում է ներկա ռեժիմի գործելաոճը»,- ասաց Մելիքյանը:

*ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

# ԱՆԿԱԽ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐ

**ՀՀ ԱԺ ՄԻՊ եւ ՀՀ հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայաստանի դատաիրավական համակարգում տեղի ունեցող զարգացումները ժողովրդավարության տեսանկյունից խիստ մտահոգիչ են: Գրություններ եմ ուղարկել միջազգային գործընկերներիս:**



Դատարանների եւ դատավորների անկախությունը երաշխավորող, անկախ պետական մարմին համարվող Բարձրագույն դատական խորհրդի ձեւավորման եւ գործունեության նախորդող ժամանակահատվածում տասնյակ դատավորներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, որոշ դեպքերում դադարեցվել են դատավորների լիազորություններ, մասնավորապես՝ դատավորներ Աննա Փիլոսյանի, Ռուբեն Վարդազարյանի, Սիմա Իսկանդարյանի, Ռաֆիկ Մելքոնյանի, Գագիկ Խանդանյանի, Վահե Խալաթյանի, Նաիրա Մխիթարյանի, Ջարուհի Նախշքարյանի, Սուրեն Անտոնյանի, Ալեքսեյ Սուքոյանի, Արայիկ Մելքումյանի (վերջինիս նկատմամբ կայացված որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել է) լիազորությունները դադարեցվել են՝ կարգապահական խախտման հիմքով:

Այս անգամ էլ խիստ մտահոգիչ գործընթաց է սկսվել ՀՀ դատական համակարգում եւ իրավաբանական հանրույթում բարձր հեղինակություն ունեցող եւ իր պրոֆեսիոնալիզմով մշտապես աչքի ընկած դատավոր Դավիթ Հարությունյանի շուրջ, որի նկատմամբ, ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությամբ, հարուցվել է կարգապահական վարույթ: Ըստ դատավորի՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը եւ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը հստակ նպատակ ունեն սահմանափակել խոսքի ազատությունը՝ դատավորներին դատական իշխանությանը վերաբերող հարցերից խոսելուց զերծ պահելու նպատակով:

Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաեւ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 19-րդ հոդվածի համաձայն՝յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք: Արտահայտվելու ազատությունը սահմանված է նաեւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում:

Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2018թ. դեկտեմբերի 21-ի թիվ 05-Լ որոշման հավելվածի Կանոն 12-ի համաձայն՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ դատավորն իրավունք ունի ինքնարտահայտման, դավանանքի ազատության, արհմիություններում եւ այլ հասարակական կազմակերպություններում միավորման, սակայն այդ իրավունքներից նա պետք է օգտվի այնպես, որ բարձր պահի դատավորի կոչումը եւ կասկածներ չառաջացնի արդարադատության մարմինների անկախության եւ անաչառության նկատմամբ: Կանոն 14-ի համաձայն՝ մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարումից զատ դատավորը կարող է՝

ա) հանդես գալ ելույթներով, զեկույցներով, գրել եւ կարդալ գրական ստեղծագործություններ, մասնակցել օրենքին, իրավական համակարգին, իրավունքի նորմերի կիրառմանը եւ նման այլ հարցերին վերաբերող միջոցառումներին,

բ) հանդես գալ պաշտոնական մարմինների բաց լսումներում, այդ մարմինների պաշտոնատար անձանց՝նրանց խնդրանքով հրապարակայնորեն ապահովել իրավունքի, իրավական համակարգի, արդարադատության իրականացման հարցերին առնչվող խորհրդատվությամբ այն չափով, որքանով դա կընդունվի որպես դատավորի իրավաբանական գիտելիքների ու փորձի օգտագործում:

Ուշագրավ եւ խիստ մտահոգիչ են նաեւ դատավոր Դավիթ Հարությունյանի այն ահազանգերը, որ միջնորդությունները պատշաճ չեն քննարկվում, իր իրավունքները՝ չեն պարզաբանվում, իսկ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, առանց միջնորդությունների վերաբերյալ դիրքորոշումներ լսելու, հեռանում է խորհրդակցական սենյակ եւ գալիս ու որոշումներ է հրապարակում, բացահայտ հայտնում է սեփականության իրավունքով Դավիթ Հարությունյանին պատկանող գույքի նկատմամբ ուժի գործադրման հնարավորության մասին:

ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում դիտարկելով նման զարգացումները, ինչպես նաեւ ընդհանուր առմամբ ոլորտային օրենսդրությունը՝ որպես այդպիսին, խնդրահարույց է դառնում «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանությունը:

Մի շարք նամակներով միջազգային գործընկերներիս ուշադրությունն եմ հրավիրել հայկական դատական անկախ համակարգի կոնկրետ սպառնալիքների դեպքերի փաստական հանգամանքների վրա: Անթուլատրելի են ոտնձգությունները անկախ դատական համակարգի նկատմամբ»:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԻՑ ԵՐԵՎԱՆ

Հուլիսի 3-ին Արցախի առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 15 բուժառու ուղեկցողների հետ միասին, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախատեսվում է օրվա ընթացքում ԿԽՄԿ մեքենաներով Արցախ վերադարձնել 8 բուժառուի ուղեկցողների հետ միասին, որոնք ժամանակին պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել են ՀՀ բուժում ստանալու համար:«Արեւիկ» բուժմիավորումում ստացիոնար բուժում է ստանում 26 երեխա, 2-ը գտնվում են նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 81 հիվանդ, 10 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 6-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

## ՉՎԵՐԹՆԵՐ՝ ԴԵՊԻ ԹՈՒՐՔԻԱ

«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերությունը հուլիսի 2-ից մեկնարկել է Երեւան - Ստամբուլ-Երեւան երթուղով չվերթերը: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ»-ի տարածած հաղորդագրությունից, չվերթերը կիրականացվեն շաբաթական 2 չվերթ հաճախականությամբ յուրաքանչյուր չորեքշաբթի եւ կիրակի օրերին:

## ԱԻՆ-ԻՑ՝ ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Երեւանի քաղաքապետի նոր մամուլի քարտուղարն է Հայկ Կոստանյանը: Այս մասին Երեւանի քաղաքապետարանի հերթական գործակարգավարական խորհրդակցության ժամանակ հայտարարեց Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Տիգրան Ավինյանը:

Հիշեցնենք, որ Կոստանյանը նախկինում զբաղեցնում էր ԱԻՆ խոսնակի պաշտոնը:

ԲԴԽ-Ի ԳՐՈՀԸ

# ԳՈՐԾԸՆԹԱՑ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԵՄ

**Բարձրագույն դատական խորհուրդը որս է սկսել դատավորների դեմ: Հերթը հասել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Մխիթար Պապոյանին: Ի դեպ, դատավոր Մխիթար Պապոյանը, Դավիթ Հարությունյանը, Արշակ Վարդանյանը, եւ այլ որոշ դատավորները մշտապես աչքի են ընկել համակարգում առկա խնդիրները բարձրաձայնելով: Երեկ դադարեցրեցին դատավոր Դավիթ Հարությունյանի լիազորությունները, եւ հիմա էլ գործընթաց են սկսում ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի Մխիթար Պապոյանի նկատմամբ:**



Իսկ ի՞նչն է հիմքը:

Քիչ առաջ դատական դեպարտամենտը հայտարարեց, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը դիմել է ՀՀ դատական դեպարտամենտին իր անուն-ազգանունը դատական գործերի բաշխման ցանկից նվազագույնը 2 ամսով հանելու կապակցությամբ, որում, մասնավորապես, ի թիվս այլնի, նշել է, որ հինգ տարբեր դատական կազմերում ներգրավվել է որպես դատական կազմի դատավոր, ինչը հավելյալ ծանրաբեռնվածության պատճառ է դարձել: Դատավորի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության եւ մշտադիտարկման վարչության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2023 թվանակի մարտի 20-ից ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածում, Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի Մխիթար Պապոյանի մակագրությամբ, Ռ. Մխիթարյանը մեկ տասնյակից ավելի գործերով ընդգրկվել է տարբեր կազմերում՝ որպես դատական կազմի դատավոր: Բացի այդ, դատավոր Ռ. Մխիթարյանը հայտնել է, որ դատական կազմերում ներգրավված լինելու մասին տեղեկացել է ներգրավվելուց հետո, ուստի իր կողմից որեւէ համաձայնություն՝ դրանցում ներգրավվելու մասով, չի տրվել: Հարկ ենք համարում նշել, որ դատական կոլեգիալ կազմերի ձեւավորման, դատական գործերի բաշխման, ինչպես նաեւ համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատական գործերի վերաբաշխման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հնարապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով եւ 2021 թվականի մարտի 25-ին ընդունված ԲԴԽ-16-Ն-6 որոշմամբ սահմանված կարգով: Ըստ նշված որոշման Հավելված 2-ի, 3-րդ գլխի 11-րդ կետի՝ դատարանների նախագահներն են փոխարինում դատական կազմերի բացակայող դատավորներին՝ բացառությամբ դատարանի նախագահի կողմից վերաքննիչ բողոքի քննությանը մասնակցության անհնարինության դեպքերի: Ստացվում է, որ ԲԴԽ որոշմամբ սահմանված կարգը շրջանցվել է, որի հետեւանքով վատթարացնող իրավիճակ է ստեղծվել դատավոր Ռ. Մխիթարյանի համար՝ ավելացնելով նրա ծանրաբեռնվածությունը: Դատական դեպարտամենտը կարեւոր է համարում եւս մեկ անգամ ընդգծել վերոնշյալ որոշման պարտադիր բնույթը բոլոր համապատասխան պաշտոնյաների համար եւ հույս է հայտնում, որ Բարձրագույն դատական խորհրդի այս եւ այլ որոշումների դրույթներն այսուհետ անշեղորեն կկատարվեն:

Ստացվում է, որ Ռուբիկ Մխիթարյանը կոնկրետ Մխիթար Պապոյանի դեմ հաղորդում է ներկայացրել ԲԴԽ՝ ասելով, որ դատարանի նախագահ Պապոյանը ԲԴԽ որոշմամբ սահմանված կարգը շրջանցել է: Նշենք, որ Ռուբիկ Մխիթարյանը այն դատավորն է, որին Կարեն Անդրեասյանն օրերս նշանակեց Վերաքննիչ քրեական դատարանում իր անձնական համակարգող, կամ, այսպես ասած, նա դարձավ Կարեն Անդրեասյանի աչքն ու ականջները Վերաքննիչ քրեական դատարանում: Ստացվում է՝ հիմա էլ նրանք գործընթաց են սկսել Մխիթար Պապոյանի դեմ: Տեսնեք՝ ինչով կավարտվի այս «կինոն»:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԿԱՐԵՎՈՐ

# ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՎԵՑԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ-ն 3 դատավորների մասով կայացրել է որոշումներ:

Երեկ ԲԴԽ-ն հայտարարեց, որ դադարեցվում են դատավորներ Արտակ Բարսեղյանի, Աստղիկ Խառատյանի եւ Տիգրան Պետրոսյանի լիազորությունները:

Հուլիսի 1-ին գրել էինք, որ, «Ժողովուրդ»օրաթերթի տեղեկությունների հանաձայն, Բարձրագույն դատական խորհրդի անդամները կիրակի օրը հավաքվելու են՝ որոշելու 5 դատավորների ճակատագիրը:

Հիշեցնենք, որ ԲԴԽ-ն կարգապահական վարույթ է հարուցել դատավորներ Տիգրան Պետրոսյանի, Արտակ Բարսեղյանի, Աստղիկ Խառատյանի, Սամվել Թադեւոսյանի (որը ազատման դիմում գրեց ու հեռացավ համակարգից՝ չսպասելով ԲԴԽ-ի որոշմանը) եւ Դավիթ Հարությունյանի նկատմամբ: Դատելով իրավիճակից ու այս կարգապահականների քննությունների շուրջ բարձացված աղմուկից՝ ԲԴԽ-ն որոշել է դադարեցնել վերոնշյալ դատավորների լիազորությունները:

Դավիթ Հարությունյանի մասով այս պահին ԲԴԽ-ում քննարկումը շարունակվում է, դեռեւս հստակ եւ վերջնական որոշում չկա:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Վերջին շրջանում հաճախ է խոսվում Երեւանում թափառող շների հարձակումների մասին: Օրեր առաջ էլ ԵՊԲՀ-ի լրատվական ծառայությունը տեղեկացրեց, որ միայն այս տարվա հունիս ամսին «Մուրացան» համալսարանական բուժհաստատություն են դիմել 32 երեխա՝ շան կծելու գանգատով:

Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Հարություն Առաքելյանի հետ՝ պարզելու համար, թե ինչ գործուն քայլեր են ձեռնարկվում:

«Մեր կենտրոնը զբաղվում է միայն Երեւան համայնքի թափառող շներով, եւ այստեղ հարց է առաջանում, թե այդ դեպքերից քանիսն է տեղի ունեցել Երեւանում, եւ քանիսն է տեղի ունեցել մարզերում, թափառող շներն են կծել, թե ընտանի կենդանին: Ինչո՞ւ եմ սա նշում. քանի որ շատ դեպքերում մարդիկ թաքցնում են, թե դեպքը որտեղ է եղել: Խնդրի լուծման համար ընտրվել է հստակ մեխանիզմ, որը գործում է աշխարհի բոլոր առաջադեմ երկրներում, եւ որը իր արդյունքը տվել է. դա ստերջացման համալիր ծրագիրն է, որը Երեւանում իրականացվում է 2019 թվականից»,-նշեց մեր զրուցակիցը:

Մեր զրուցակցի փոխանցմամբ՝ այս տարի ստեղծվել է թափառող շների կացարանների նախագիծ, որը հնարավորություն կտա մեծ քանակությամբ ստերջացված շների ապահովել կացարանով. «Մեկ կացարան արդեն նախագծման փուլում է, եւ եւս 4-ը պատրաստվում ենք նախագծել»:

Հիշեցնենք, որ 2019 թվականի մարտ ամսից Երեւանի քաղաքապետարանում գործում է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ը, որը կոչված է զբաղվելու թափառող կենդանիների հարցերով:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՈՒՇԱԳՐԱՎ

# ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻՍԿՈ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Հուլիսի 3-ին սպանություն է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 05:25-ի սահմաններում «Արմավիր» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արմավիրի բաժին ահազանգ է ստացվել, որ «կտրած-ծակած» մարմնական վնասվածքներով իրենց մոտ են տեղափոխվել մի քանի քաղաքացիներ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց են մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ Արթուր Բդոյանը, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Հովհաննես Արիստակեսյանը, ոստիկանության Արմավիրի բաժնի պետ Վոլոդյա Գեւորգյանը, ոստիկանության Մեծամորի բաժնի պետ Սամվել Խմելյանն ու ոստիկանության Բաղրամյանի բաժնի պետ Նշան Հախնազարյանը:

Հիվանդանոցում բժշկները ոստիկաներին հայտնել են, որ վիրավորներից մի քանիսը ի վիճակի չեն բացատրություն տալու, իսկ մեկն էլ մահացել է:

Մինչ բժշիկները վիրավորներին անհրաժեշտ օգնություն էին ցուցաբերում, Արմավիրի մարզի ոստիկանները պարզել են, որ նրանք են Արմավիրի մարզի բնակիչներ 24-ամյա Սարգիս Հ.-ն, 32-ամյա Անդրանիկ Գ.-ն, իսկ մահացածը՝ Արմավիրի մարզի բնակիչ 53-ամյա Քերոբ Հ-ն:

Պարզվում է նաեւ, որ նրանք տեղափոխվել են գյուղի Հինգ հարկերի փողոցում՝ «ՈՒՆԵ» Ա/Ձ-ում գտնվող կարաոկե դիսկոտեկ ակումբից, որտեղ ժամը 03:00-ի սահմաններում Սարգիս Հ.-ն, Անդրանիկ Գ.-ն, Քերոբ Հ.-ն եւ Արմավիրի մարզի բնակիչ 33-ամյա Սեւակ Գ.-ն վիճաբանել են Արագածոտնի մարզի բնակիչներ 23-ամյա Ջոհրաբ Բ.-ի եւ 24-ամյա Վալեր Ս.-ի հետ, որի ժամանակ փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Այդ ընթացքում Ջոհրաբ Բ-ն իր մոտ եղած դանակով հարվածներ է հասցրել Սարգիս Հ-ին, Անդրանիկ Գ-ին եւ Քերոբ Հ-ին, որոնք էլ մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Կասկածյալները ոստիկանության Արմավիրի բաժնից ներկայացվում են Հայաստանի քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 30-ից հուլիսի 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 145 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՆՓՈՒՅԹ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱՑ

Տավուշի մարզպետարանը կամ, ինչպես իրենք են վերջերս իրենց կոչում, Տավուշի մարզպետի աշխատակազմը հունիսի 29-ին մարզպետարանի ինտերնետային կայքի գլխավոր էջում՝ «Ուշադրություն» խորագրի ներքո, զետեղել է հետեւյալ հայտարարությունը. «2023 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 13:00-ից մինչեւ 14:00-ն, Բերդ-Մովսես ավտոճանապարհի գյուղ մտնող սկզբնամասը փակ է լինելու: Փրկարարների ուժերով իրականացվելու են հարկադիր քարաթափման աշխատանքներ»: Ի՞նչ կարիք կա հունիսի 29-ին զգուշացնել մեկ ամիս հետո՝ հուլիսի 29-ին իրականացվելիք քարաթափման մասին: Իրականում քարաթափումը եղել է հունիսի 29-ին. Տավուշի մարզպետարանում հունիսն ու հուլիսը շփոթել են: Եվ դա իրենց աշխատանքային գործունեության մեջ եզակի բացթողումը չէ: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, հարսանիքի քավոր, նրա որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը եւ մարզպետարանի պաշտոնյաները իրենց աշխատանքում հաջողություններ չունեն, սակայն, բարձր աշխատավարձից զատ, տարեկան տասնյակ միլիոնավոր դրամների պարգեւավճարներ են ստանում պետական բուջեից:

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՕՐԵՆՔ ԽԱԽՏԵԼ

Նախկինում գրել եմ, որ Իջեւան քաղաքի կենտրոնում՝ «ԷկոՏավուշ» ՍՊԸ-ի ֆիրմային խանութում վաճառվող հալած յուղի տուփի վրա հայերեն ոչ մի գրառում չկա, բոլոր գրառումները ռուսերեն են, բացի ընկերության անվան լատինատառ գրառումից: Սա օրենքի կոպիտ խախտում է, քանզի Հայաստանում արտադրվող, վաճառվող արտադրանքը պետք է ունենա ապրանքի վերաբերյալ հայերեն տեղեկատվություն: Հալած յուղն արտադրվում է Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղում գործող «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի պանրագործարանում: Մի քանի օր առաջ՝ հունիսի 29-ին, կրկին եղա Իջեւանում գործող այդ ֆիրմային խանութում եւ տեսա, որ վաճառվող հալած յուղի տուփերի վրա հայերեն գրառումներ չկան: Նույն խանութում վաճառվող, «ԷկոՏավուշի» արտադրած պանրի հատիկների փաթեթի հակառակ երեսին հայերեն գրառումն այնքան փոքր չափի տառերով է, որ խոշորացույցով է հնարավոր այն կարդալ: «ԷկոՏավուշ» ընկերությունը Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի պանրագործարանում արտադրված պանրի հիմնական մասն արտահանում է Ռուսաստանի Դաշնություն: «ԷկոՏավուշ» ՍՊԸ-ի տնօրենը Հասմիկ Գեւորգյանն է, այդ ընկերությունը ստեղծվել է «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի կողմից, որի տնօրենը Ֆրանսիայի հայկական հիմնադրամի տնօրեն Սուրեն Գեւորգյանն է: Հասմիկ Գեւորգյանը Սուրեն Գեւորգյանի կինն է: Ամուսիններով փոխկապակցված ընկերությունների տնօրեններ լինելը պարունակում է կոռուպցիոն լուրջ ռիսկեր:

*ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

# ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ Է

**ՀՀ առողջապահության նախարարության դեղապահովման ծրագրում կատարվել են բարեփոխումներ. այս մասին հայտնում է ՀՀ առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության եւ բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Մարինե Հարությունյանը: Նրա խոսքով՝ պետական աջակցությամբ անվճար տրամադրվող դեղեր ստացող շահառուների ցանկն ընդլայնվել է:**



«Կառավարության որոշմամբ՝ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումներ ունեցող անձանց այսուհետ անվճար կտրամադրվեն հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերը: Ասեմ, որ մինչ այս որոշումը գործող ընթացակարգով ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումներ ունեցող անձինք անհրաժեշտ դեղերը ստանում էին 50 տոկոս զեղչով: Այժմ ամբողջությամբ անվճար տրամադրվելու է»,-ասաց Մարինե Հարությունյանը:

Մասնագետը նշեց, որ մասնագիտական խմբով պարբերաբար ուսումնասիրություններ են անում, եւ առկա պահանջարկից, խնդիրներից ելնելով էլ պարբերաբար ծրագրում կատարվում են փոփոխություններ: Ընդհանուր ծրագրից օգտվում է շուրջ 220 հազար շահառու, իսկ նշված բարեփոխումների արդյունքում շահառուների թիվն ավելանում է 30 հազարով: Շահառուների թվի ավելացմամբ պայմանավորված՝ պետությունը շուրջ 400 մլն դրամով ավելացրել է ծրագրի բյուջեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդհանուր դեղերի ցանկը նույնպես վերջին շրջանում ընդլայնվում է: Եթե տարիներ առաջ 310 ջեներիկ անունով (ազդող նյութերով) դեղեր կային, ապա այսօր այդ թիվը դարձել է 530: Մարինե Հարությունյանը տեղեկացրեց, որ ցանկը համալրվել է եւս 5 անվանում դեղով: Մասնագետը հիշեցրեց, որ պետական աջակցությամբ դեղերը ձեռք են բերվում ջեներիկ անվամբ, այսինքն՝ ազդեցիկ նյութերով: Լինում են դեպքեր, երբ բժիշկը բուժառուին նշանակել է դեղ, իսկ պոլիկլինիկան տրամադրում է այլ անվամբ. շատերի մոտ թյուրըմբռնում է լինում:

«Հաշվի են առնվում նեղ մասնագետների կարծիքները, ուսումնասիրվում է պահանջարկը, եւ այժմ կարող ենք ասել, որ դեղերի բավական լայն շրջանակ անվճար հասանելի է մեր շահառուներին»,-հավելեց մասնագետը:

Կատարվել է եւս մեկ կարեւոր փոփոխություն, որն ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից: Եվս 6 հիվանդության բուժման համար անհրաժեշտ դեղերը պետության կողմից շահառուներին կհատկացվեն անվճար: Այդ հիվանդություններն են պատանեկան իդիոպաթիկ արթրիտ, առաջնային իմունոդեֆիցիտ, կավասակի հիվանդություն, նյարդաբանական խնդիրներով պայմանավորված հիվանդություն - սուր պոլիռադիկուլիտ, անհաս նորածինների դեղերի կարիք ունեցող պացիենտներ, ցրված սկլերոզ: Շուրջ 486 շահառու, այդ թվում՝ մեծամասնությունը երեխաներ, անվճար կապահովվեն նախկինում պետության կողմից երբեւէ չտրամադրած դեղերով: Արդյունքում կկանխարգելվի վերը նշված հիվանդությունների զարգացումը, կնվազեն հաշմանդամության եւ մահացության ցուցանիշները: Դեղ ապահովման ծրագրի բյուջեն 2024 թվականին կլինի 4 մլրդ դրամից ավելի:

Մարինե Հարությունյանը նշեց, որ ցանկացած հարցի դեպքում քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ առողջապահության նախարարության թեժ գծի հեռախոսահամարով՝ 83-03, ինչպես նաեւ Դեղերի վարչության հեռախոսահամարով՝ 060 80-80-03 (ներքին համար՝ 14-21):

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Օկ Կրեդիտ» ՈւՎԿ ՍՊԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Յ. Լեփսիուսի փողոց, 11 շենք, 31 հասցեում գտնվող 73,4 ք.մ. բնակարան եւ 52,0 ք.մ. ինքնակամ կառուցված կցակառույց: Լոտի մեկնարկային գինը՝ 36100000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 20.07.2023թ.-ին, 21.07.2023թ.-ին եւ 24.07.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29?12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ գրավառուի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար գրավառուն որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 45 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 62-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԼՈՒՐԵՐ

# ՄՈՍԿՎԱ–ԵՐԵՎԱՆ ԹՌԻՉՔԻ ՏՈՄՍԵՐՆ ԷԺԱՆԱՆՈՒՄ ԵՆ



Մոսկվա-Երեւան թռիչքի տոմսերի արժեքը, նախորդ շաբաթվա համեմատ, նվազել է: Նախկին 130-198 հազար դրամի փոխարեն այժմ կարող եք տոմսերը ձեռք բերել 112-120 հազար դրամով aviasales.ru տոմսերի օնլայն ամրագրման համակարգից:

Wizz Air ավիատոմսերի օնլայն ամրագրման համակարգում Մոսկվայից կրկին որեւէ թռիչքի ուղղություններ չկան:

Նշենք նաեւ, որ ռուբլու արժեքը կրկին նվազում է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

# ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է Սարգիս Մաղաքյանի՝ Արարատի մարզի Վեդի համայնքի Ուրցաձոր գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական եւ գյուղատնտեսական /ոռոգում 0,3 հա / նպատակներով Վեդի գետի Մանկունք վտակից համապատասխանաբար 50,0 լ/վ եւ 0,75 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից - 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Արմինե Սամվելի Բեջանյանի N 016079 դիպլոմը՝ տրված Երեւանի պետական համալսարանի կողմից 17 հուլիսի 1996 թվականին:

Գրանցման համար՝ 60227, որով Արմինե Բեջանյանին շնորհվել է իրավաբանի որակավորում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Գ.

«ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 25.07.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մեկնարկային գին՝ 1,807,549 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

Մեկնարկային գին՝ 1,456,081 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մեկնարկային գին՝ 627,621 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

Մեկնարկային գին՝ 527,201 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

Մեկնարկային գին՝ 768,836 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

Մեկնարկային գին՝ 2,322,198 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

Մեկնարկային գին՝ 699,799 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 22,320 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 167,404 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մեկնարկային գին՝ 148,803 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 18,600 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

Մեկնարկային գին՝ 13,020 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 44,641 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 55,801 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 18,600 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱԱՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մեկնարկային գին՝ 48,361 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱԱՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող ներքոնշյալ գույքի վարձակալության պայմանագիր կնքելու իրավունքի բաց աճուրդ «դասական» եղանակով.

- ք. Երեւան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա, 86 հասցեում գտնվող Երեւան կայարանի մեկնակայանի շենքի 1-ին հարկում գտնվող 327,84 ք.մ. տարածք: Մեկ ամսվա վարձավճարի մեկնարկային գինը ՝1695588 ՀՀ դրամ: Տարածքը կարող է օգտագործվել միայն որպես հասարակական սննդի օբյեկտ, առեւտրի սրահ, գրասենյակային տարածք կամ պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված այլ նպատակով:

Վարձակալության պայմանագրի ժամկետը՝ առնվազն մեկ տարի:

Պայմանագիրը կնքվելու է աճուրդի արձանագրությունը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 20.07.2023թ.-ին, ժ.12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝29.12.2023թ. ներառյալ: Լոտի աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 200000 ՀՀ դրամ, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ՄԱՐԶԻԿԸ՝ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը աշխարհի եւ Եվրոպայի ուժային եռամարտի չեմպիոն, միջազգային սպորտի վարպետ Սերգեյ Ալվանյանն է:**



Մենք զրուցել ենք մարզիկի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է կերտել իր ճանապարհը, նաեւ դրսում եւ արտերկրում ունեցած հաջողությունների մասին:

**-Պարո՛ն Ալվանյան, խնդրում եմ, մեզ ներկայացրեք՝ինչ ճանապարհ եք անցել նման լուրջ արդյունքների հասնելու համար:**

-Ուկրաինայում 2016 թվականին աշխարհի գավաթի 2-րդ հորիզոնականը նվաճելուց հետո սպորտի նախարարը շնորհեց միջազգային սպորտի կարգ: Իսկ եռամարտով սկսեցի զբաղվել 25 տարեկանից, բայց սպորտով զբաղվում եմ վաղ տարիքից՝ ֆուտբոլով, հեծանվասպորտով: Նշեմ նաեւ, որ ֆուտբոլում էլ վատ արդյունքներ չեմ գրանցել:

Սպորտի մասին տեղեկացել եմ համացանցից, շատ հետաքրքրեց, սկսեցի ինֆորմացիա հավաքել սպորտաձեւի մասին: 2010 թվականից սկսեցի այցելել մարզումների, 2013-2014 թվականներին մասնակցել եմ տեղի առաջնություններին եւ գրանցել լավ արդյունքներ, ընդգրկվել եմ հավաքանականի կազմում: 2015 թվականից հանդես եմ եկել միջազգային հարթակներում: Մասնակցել եմ միջազգային 9 մրցաշարերի, եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների: Ստացել եմ միջազգային մրցավարի լիցենզիա: Հանդիսանում եմ մրցավարների խորհրդի անդամ:

**-Ի՞նչ փուլում է Հայաստանում եռամարտի զարգացումը:**

-Հայաստանում 2016 թվականից շատ ակտիվ սկսեցինք զարգացնել եռամարտը՝ տարիների ընթացքում բացելով 2 միջազգային ֆեդերացիա: Մեծ ակտիվություն նկատվեց երիտասարդների շրջանում եւ սպորտսմենների շրջանում: Մեծ հոսք սկսեց միջազգային հարթակներ: Իմ փորձն ու գիտելիքն եմ փոխանցել սաներիս, որոնք նույնպես վատ արդյունքներ չեն գրանցել Հայաստանում եւ միջազգային հարթակներում: Ձեռք ենք բերել միջազգային նորմերին համանատասխան սպորտային գույք:

Հիմա, ցավոք, դեռ վատ փուլում է գտնվում եռամարտը Հայաստանում, սակայն ավելի լավ է, քան առաջ:

**-Ի՞նչ խոչընդոտների եք հանդիպել եռամարտը Հայաստանում զարգացնելու ընթացքում:**

-Եռանարտի մասին ինֆորմացիան շատ քիչ է: Հայաստանում որակավորված մասնագետները քիչ են, որպեսզի մարզեն, եւ լավ արդյունք ունենանք: Հատուկ նախատեսված մարզասրահներ չկան: Երբ գնում ենք միջազիային մրցաշարերի եւ տեսնում ենք շատ մարզասրահներ, դրանք շատ գրավիչ են, եւ լավ կլիներ՝մենք եւս ունենայինք նման մարզասրահներ:

Ցանկալի է, որ խթանենք Հայաստանում այս սպորտաձեւի զարգացումը:

**-Պատմե՛ք Ձեր աշխատանքի սկզբունքների մասին:**

-Ես իմ սաներին առաջինը խորհուրդ եմ տալիս ունենալ նպատակներ, որովհետեւ առանց նպատակների անհնար է հասնել լավ արդյունքների: Խորհուրդ եմ տալիս լինել խելացի, որովհետեւ սպորտաձեւում, ինձ թվում է, ուժեղ լինելը երկրորդական է, առաջինը՝ պետք է լինես տեխնիկապես զարգացված մարզիկ վնասվածքներ չստանալու համար, երկրորդը՝ կարողանաս գրանցել լավ արդյունքներ:

**-Ո՞րն է եղել Ձեր ամենատպավորիչ հաղթանակը:**

-2017 թվականին Լեհաստանում տեղի ունեցավ ուժային եռամարտի աշխարհի առաջնությունը, որտեղ զբաղեցրել եմ առաջին հորիզոնականը, որտեղ թեժ պայքարեր էր գնում իմ եւ ուկրաինացի մարզիկի միջեւ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Դա շատ տպավորիչ ելույթ էր, որին պատրաստվել էի երկար ժամանակ, եւ հավատում էի, որ առաջին տեղը կզբաղեցնեմ:

**-Ի՞նչ նպատակներ ունեք՝ սպորտաձեւի հետ կապված:**

-Սպորտաձեւի հետ կապված մեծ հույսեր ունեմ եւ մեծ աշխատանք ունեմ կատարելու այդ հույսերն արդարացնելու համար: Նպատակներ ունեմ, որոնք պիտի կատարվեն. դրանք են աշխարհի եւ եվրոպայի մրցումներին մասնակցելը, ուզում եմ եվրոպայի եւ աշխարհի ռեկորդները թարմացնել: Ցանկանում եմ փորձով օգնել մնացած մարզիկներին, առաջ գնալ եւ նոր հաղթանակներ գրանցել:

*Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԵՐՐՈՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԹԻՄՆ Է

Իսպանիայի Սանտիագո դե Կոմպոստելա քաղաքում ավարտված ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Հայաստանի հավաքականն ընդհանուր հաշվարկում գրավել է երրորդ տեղը:

Հայաստանի թիմն այս առաջնությունում պայքարն ավարտեց 1 ոսկե, 3 արծաթե եւ 2 բրոնզե մեդալներով:

Չեմպիոն դարձավ 92 կգ քաշային Կնյազ Իբոյանը, որը եզրափակչում կամային հաղթանակ տարավ թուրք մրցակցի նկատմամբ:

Արծաթե մեդալակիրներ դարձան Լեւիկ Միքայելյանը (61 կգ), Հայկ Պապիկյանը (74 կգ), Մուշեղ Մկրտչյանը (86կգ), բրոնզե մեդալակիրներ Նարեկ Գրիգորյան (79 կգ) եւ Անդրանիկ Ավետիսյան (65 կգ):

## «ԱԼԱՇԿԵՐՏԸ» ԿԸՆԴՈՒՆԻ «ՄԵՍ ՌԱՖՍԱՆՋԱՆԻՆ»

«Ալաշկերտի» նախապատրաստական ծրագրում տեղի է ունեցել փոփոխություն: Վահե Գեւորգյանի գլխավորած թիմը, Մինսկի փոխարեն, Երեւանի ֆուտբոլի ակադեմիայում կանցկացնի մարզական հավաքը. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

Այսօր՝հուլիսի 4-ին, «Ալաշկերտը» Ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտում ստուգողական հանդիպում կանցկացնի Չարենցավանի «Վանի» հետ:

Հուլիսի 7-ին «Ալաշկերտ» մարզադաշտում երեւանյան թիմը կընդունի Իրանի բարձրագույն խումբը ներկայացնող Mes Rafsanjan թիմին:

Ստուգողական խաղերից հետո «Ալաշկերտը» սեփական ստադիոնում կշարունակի նախապատրաստվել Կոնֆերենցիաների լիգայում Չեռնոգորիայի «Արսենալ Տիվատ» թիմի հետ դիմակայությանը:

Առաջին խաղը տեղի կունենա հուլիսի 13-ին «Ուրարտու» մարզադաշտում եւ կմեկնարկի 21:00-ին, պատասխան հանդիպումը տեղի կունենա մեկ շաբաթ անց Չեռնոգորիայում:

«Ալաշկերտը» շուտով կհայտարարի նոր տրանսֆերների մասին:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉԸ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ամփոփել է «Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի՝ 2022/2023 մրցաշրջանի լավագույն մարզիչ» անվանակարգում քվեարկության արդյունքները:

Հավաքելով 86 միավոր՝ Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի՝ 2022/2023 մրցաշրջանի լավագույն մարզիչ է ճանաչվել Երեւանի «Ուրարտուի» գլխավոր մարզիչ Դիտրի Գունկոն:

67 միավորով երկրորդ տեղում է «Փյունիկի» գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը:

24 միավորով լավագույն եռյակը եզրափակել է «Ալաշկերտը» գլխավորող Վահե Գեւորգյանը:

1. Դմիտրի Գունկո, «Ուրարտու»՝ 86
2. Եղիշե Մելիքյան, «Փյունիկ»՝67
3. Վահե Գեւորգյան, «Ալաշկերտ»՝24
4. Ռաֆայել Նազարյան, ԲԿՄԱ՝11
5. Վարդան Բիչախչյան, «Արարատ-Արմենիա»՝10:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ԿՈՉԸ՝ Disney–ԻՆ ➩

Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA) կոչ է արել Disney-ին չեղարկել ժամանակակից թուրքական պետության հիմնադիր հոր՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կյանքի մասին առաջիկա սերիալը: ANCA-ն մեղադրել է Disney-ին «բռնապետին ու մարդասպանին» հերոսացնելու համար:

Սերիալի պրեմիերան նախատեսված է այս տարվա հոկտեմբերի 29-ին, որը համընկնում է Թուրքիայի Հանրապետության 100-ամյակի հետ: Disney-ը որեւէ ցուցում չի տվել, որ կքննարկի սերիալը չեղարկելու հարցը:

«Մենք կոչ ենք անում @DisneyPlus-ին չեղարկել սերիալը, որը փառաբանում է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին՝ թուրք բռնապետին ու մարդասպանին, որն իր ձեռքերում ունի միլիոնավոր հույների, հայերի, ասորիների, քաղդեացիների, սիրիացիների, արամացիների, մարոնիների եւ այլ քրիստոնյա նահատակների արյունը», - «Թվիթեր»-ում գրել է ANCA-ն:




## ՄՈՏԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՄԵՐԳԸ՝ ԱՆԱՎԱՐՏ

Ռեփեր Մոտի երեւանյան ելույթը մնաց անավարտ: Համերգից հետո Մոտը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում պատմել է, որ ելույթի ընթացքում շտապօգնության մեքենայով տեղափոխվել է հիվանդանոց վնասվածքի պատճառով:

«Երեւա՛ն, շնորհակալ եմ ջերմ ընդունելության համար: Ցավոք, ստիպված եղա ելույթի կեսից հեռանալ, որովհետեւ ուսս դուրս էր ընկել»,-ասել է նա:

Հիշեցնենք, որ միջոցառմանը նաեւ ելույթ ունեցան ռուսաստանաբնակ երգիչ Սեւակ Խանաղյանը, D'Litte-ը եւ ուրիշներ:

*ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ*

● *Հուլիսի 5-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «я, моя хандра, дорогая капочка и иные взгляды» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ*

## ԼԻՑԵՆԶԻԱ

**ՀԱՐՑ. Ի՞նչ է ճառագայթման աղբյուրների հետ իրականացվող գործունեության լիցենզիան:**

*Սերոբ Թեւոսյան (52 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** ՀՀ-ում ճառագայթման աղբյուրների հետ իրականացվող՝ լիցենզավորմանը ենթակա գործունեության տեսակները սահմանված են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի առ 30.05.2001թ. հոդված 43-ում բերված աղյուսակի 13-րդ կետում:

*ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ճառագայթման աղբյուրների հետ իրականացվող գործունեության լիցենզիան օրենքում նշված գործունեության տեսակներով զբաղվելու իրավունքը հաստատող եւ/կամ հավաստող պաշտոնական թույլտվություն է կամ պաշտոնական փաստաթուղթ է:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ուսումնական հաստատությունը ե՞րբ կարող է ստանալ խորհրդատվություն:**

*Վաչագան Գալեյան (33 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Առաջիկայում կայանալիք խորհրդատվության վերաբերյալ կարելի է տեղեկանալ՝ ՀՀ կրթության տեսչական մարմնի պաշտոնական կայքին՝ eib.am հետեւելով:

*ՀՀ կրթության տեսչական մարմին*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Տեղեկանալով խորհրդատվության անցկացման ժամկետի եւ ձեւի մասին՝ ցանկացողները կարող են առցանց ներկայացնել մասնակցության հայտ եւ հետագայում արդեն ստանալ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվություն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ը հայտնում է, որ Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհահատվածի M-4 մայրուղու 57կմ հատվածում տեղադրվել է ՄԱԶԾ-ի օժանդակությամբ ձեռք բերված ճանապարհային ավտոմատ օդերեւութաբանական կայան, որը 10 րոպեն մեկ հաճախականությամբ չափում եւ տրամադրում է տեղեկատվություն հետեւյալ օդերեւութաբանական պարամետրերի վերաբերյալ՝ հորիզոնական տեսանելիություն, օդի ջերմաստիճան, քամու ուղղություն եւ արագություն, տեղումների քանակ, ինչպես նաեւ մայրուղու վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:


2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ __________

Ազգանուն՝ __________

Առաքման հասցե՝ __________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ __________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| Շիրակ | +9 +14 | +23 +27 |
| Կոտայքի լեռներ | +9 +13 | +20 +23 |
| Կոտայքի նախալեռներ | +18 +20 | +29 +30 |
| Գեղարքունիք | +9 +13 | +20 +25 |
| Լոռի | +10 +15 | +21 +26 |
| Տավուշ | +12 +16 | +25 +29 |
| Արագածոտնի լեռներ | +8 +12 | +21 +24 |
| Արագածոտնի նախալեռներ | +18 +20 | +28 +33 |
| Արարատ | +18 +22 | +35 +37 |
| Արմավիր | +15 +19 | +34 +36 |
| Վայոց ձորի լեռներ | +8 +11 | +21 +23 |
| Վայոց ձորի նախալեռներ | +18 +21 | +34 +37 |
| Սյունիքի հովիտներ | +17 +21 | +32 +36 |
| Սյունիքի նախալեռներ | +13 +17 | +24 +28 |
| ԼՂՀ | +17 +21 | +30 +34 |
| Երեւան | +17 +19 | +33 +35 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*